

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ՔԵՆՏԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՎ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻԱՅԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԴՈԿՏ. ՄԱՅՔԼ ՌԵՄՋԻԻՆ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ ՀԻՍՆԱՄՅԱԿԸ ՆՇԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՔԵՆՏԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԵՐԱՇՆՈՐՀ ԴՈԿՏ. ՄԱՅՔԼ ՌԵՄՋԻԻՆ

ԼՈՆԴՈՆ

Խոր հուզումով և շնորհակալությամբ ժամանակին ստացել ենք Ձերդ Գերաշնորհության 1 նոյեմբեր 1964 թվակիր գրությունը, ինչպես նաև 23 ապրիլ 1965 թվակիր Ձեր հեռագիրը, որով հայտնում եք, որ Անգլիկան Եկեղեցին այս տարի ապրիլի 24-ին կմիանա իր աղոթքներով մեր Եկեղեցուն, հիսուն տարի առաջ Արևմտյան Հայաստանի մեր անմեղ ժողովրդի բնաջնջման տարելիցի նշման առթիվ:

Բազմադարյան Հայ Եկեղեցին, ինչպես նաև անձամբ Մենք և համայն հայ հավատացյալ ժողովուրդը, խորապես մխիթարված ենք Ձեր այս բարի զգացումների համար:

Ձերդ Գերաշնորհության և Ձեր Եկեղեցու աղոթքները մեր ժողովրդի շուրջ երկու միլիոն նահատակների հոգիների խաղաղության համար, քրիստոնեական սիրո և եղբայրության պատմական մի վկայություն են հանդիսանում դեպի Հայ Եկեղեցին և հայ ազգը:

Վստահ եղեք, թե այս վկայությունը կարձանագրվի ոչ միայն պատմության, այլ նաև Մեր և մեր ամբողջ ժողովրդի սրտերի մեջ, փոխանցելով այն նաև հետագա սերունդներին:

Ս. Էջմիածնի բազմադարյան սեղանների առաջ, մնում ենք միշտ աղոթող համայն աշխարհի խաղաղության համար, որպեսզի այլևս ոչ մեկ տեղ մեր երկրագնդի վրա չկրկնվեն ցեղասպանության արհավիրքները և մարդկային ողբերգությունները:

Խաղաղություն և բարօրություն նաև Ձեր մեծ Եկեղեցուն և համայն Ձեր հավատացյալ ժողովրդին:

Քաջառողջության մաղթանքներով և եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

4 մայիսի 1965 թ.
Յ. Էջմիածին

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը նույն առիթով և նման բովանդակությամբ նամակներ ուղարկեց նաև Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ Նորին Սրբություն Տ. Տ. ՊԱՎՂՈՍ Զ Պապին (Հռոմ), Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն ԱԼԵՔՍԻԻՆ (Մոսկվա):